ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 04.10.2019թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2019/69

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս

Մասնակցությամբ Երևանի քաղաքապետարանի լիազորված ներկայացուցիչ՝

Ա. Համբարձումյանի (լիազորագիր տրված՝ 25.09.2019թ.)

«ՍԱՄԱԼԻ» ՍՊԸ-ի լիազորված ներկայացուցիչ՝

Հ. Ենգոյան (լիազորագիր տրված՝ 19.09.2019թ.)

Քննելով Երևանի քաղաքապետարան կարիքների համար քաղցրավենիքի փաթեթների ձեռքբերման նպատակով հայտարարված «ԵՔ-ԲՄԱՊՁԲ-19/11» ծածկագրով բաց մրցույթի շրջանակներում «ՍԱՄԱԼԻ» ՍՊԸ-ի կողմից 18.09.2019թ. ներկայացված և 18.09.2019թ. վարույթ ընդունված բողոքը (հետայսու նաև՝ ԳԲՔԱ-ՆԳ-2019/69 բողոք) և կից փաստաթղթերը, պարզեցի հետևյալը.

1. «ՍԱՄԱԼԻ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.

«ՍԱՄԱԼԻ» ՍՊԸ-ն (հետայսու նաև՝ Ընկերություն) ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացրած 18.09.2019թ. բողոքով հայտնել է հետևյալը.

«Երևանի քաղաքապետարանի կարիքների համար քաղցրավենիքի փաթեթների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ԵՔ-ԲՄԱՊՁԲ-19/11» ծածկագրով բաց մրցույթի (հետայսու նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցության հայտ է ներկայացրել նաև «ՍԱՄԱԼԻ» ՍՊԸ-ն:

Գնահատող հանձնաժողովի 27.08.2019թ. ժամը 11:00-ին տեղի ունեցած նիստի թիվ 2 արձանագրության 4.1 կետի համաձայն՝ «ՍԱՄԱԼԻ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերում, այդ թվում նաև գնային առաջարկում, նշված է «ՍԱՄԱԼԻ» ՍՊԸ-ի տնօրեն Մ. Հարությունյան, սակայն փաստաթղթերը էլեկտրոնային ստորագրությամբ հաստատված է Աշոտ Ազիզյանի կողմից: Մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթում բացակայում է Աշոտ Ազիզյանի՝ Ընկերության տնօրենի կողմից փաստաթղթերը էլեկտրոնային ստորագրությամբ հաստատելու իրավունքը սահմանող փաստաթուղթը /լիազորագիրը/:

Նույն 4.1 կետի համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով վերոգրյալը, որոշել է մերժել «ՍԱՄԱԼԻ» ՍՊԸ-ի հայտը:

Բողոքի իրավական հիմքերը և հիմնավորումները.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մասնակիցը չի կարող նույն ընթացակարգին ներկայացնել մեկից ավելի հայտ: Մասնակիցը հայտը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով: Հայտը ներառում է մասնակցի հաստատած՝

1) հրավերի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությունը,

2) գնային առաջարկը.

3) ոչ գնային առաջարկը (տեխնիկական առաջարկ կամ տեխնիկական բնութագիր), եթե հրավերով նախատեսված է.

4) հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ):

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ եթե հայտը ներկայացնում է գործակալը, ապա հայտով ներկայացվում է վերջինիս այդ լիազորությունը վերապահված լինելու մասին փաստաթուղթ:

«ԵՔ-ԲՄԱՊՁԲ-19/11» ծածկագրով բաց մրցույթի հրավերի Մաս II-ի 3.2-րդ կետի համաձայն՝ հրավերով նախատեսված՝ մասնակցի կազմած փաստաթղթերը ստորագրում է դրանք ներկայացնող անձը կամ վերջինիս լիազորված անձը (այսուհետ՝ գործակալ): Եթե հայտը ներկայացնում է գործակալը, ապա հայտով ներկայացվում է վերջինիս այդ լիազորությունը վերապահված լինելու մասին փաստաթուղթ:

Այպիսով, համաձայն վկայակոչված նորմերի, հայտը ստորագրելու լիազորությունը հաստատող փաստաթուղթը՝ լիազորագիրը, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ի մասի իմաստով հանդիսանում է հայտում ներառվող փաստաթուղթ, որը ներկայացվում է հայտը ստորագրելու լիազորությունը հավաստելու համար:

Միևնույն ժամանակ, ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում են գնային առաջարկը և (կամ) հայտի ապահովումը կամ եթե դրանք ներկայացված են հրավերի պահանջներին անհամապատասխան: Գնումն էլեկտրոնային համակարգով իրականացվելու դեպքում հիմք է ընդունվում համակարգում կցված՝ մասնակցի կողմից հաստատված գնային առաջարկը.

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ հայտում բացակայում է գնային առաջարկը կամ հայտի ապահովումը,

կամ գնային առաջարկը, կամ հայտի ապահովումը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Այսպիսով Կարգի 41-րդ կետը ուղղակիորեն սահմանում է արձանագրված անհամապատասխանությունը շտկելու անթույլատրելիություն հայտում ներառվող միայն երկու փաստաթղթի համար՝ գնային առաջարկ և հայտի ապահովում: Կարգի 41-րդ կետի իմաստից բխում է, որ մնացած բոլոր դեպքերում հայտում ներառվող այլ փաստաթղթերում արձանագրված անհամապատասխանությունն ենթակա է շտկման:

Այս տեսանկյունից, հաշվի առնելով այն հանգամանքը, որ լիազորագիրը վերոհիշյալ նորմերի համաձայն, հանդիսանում է հայտով ներկայացվող փաստաթուղթ և չի հանդիսանում գնային առաջարկ կամ հայտի ապահովում, ուստի դրանում անհամապատասխանություն արձանագրվելու դեպքում, գործում է Կարգի 41-րդ կետով նախատեսված շտկելու հնարավորությունը, ինչը չի կատարել Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը:

Ավելին, Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից, 27.08.2019թ. ժամը 11:00-ին տեղի ունեցած նիստի թիվ 2 արձանագրության 4.1 կետով արձանագրվել է փաստ, որ «ՍԱՄԱԼԻ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերում, այդ թվում նաև գնային առաջարկում, նշված է «ՍԱՄԱԼԻ» ՍՊԸ-ի տնօրեն Մ. Հարությունյան, սակայն փաստաթղթերը էլեկտրոնային ստորագրությամբ հաստատված է Աշոտ Ազիզյանի կողմից: Մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթում բացակայում է Աշոտ Ազիզյանի՝ Ընկերության տնօրենի կողմից փաստաթղթերը էլեկտրոնային ստորագրությամբ հաստատելու իրավունքը սահմանող փաստաթուղթը /լիազորագիրը/:

Տվյալ դեպքում լիազորագրի բացակայությունը չէր կարող դրվել «ՍԱՄԱԼԻ» ՍՊԸ-ի հայտը մերժելու հիմքում, քանի որ ինչպես արդեն նշվել է, լիազորագիրը հանդիսանում է ընդամենը հայտում ներառվող փաստաթուղթ, որը տրված է ոչ թե միայն գնային առաջարկը ստորագրելու համար, այլ ամբողջ հայտի փաթեթը ստորագրելու համար, և

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ հայտում ներառվող և շտկման ենթակա փաստաթուղթը՝ լիազորագիրը /կամ դրա բացակայությունը/ ենթակա է շտկման:

Այսպիսով Ընկերությունը գտնում է, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը, մերժելով Ընկերության հայտը, գործել է ոչ իրավաչափ և խախտել է Կարգի 41-րդ կետով սահմանված պահանջները:

Ընկերությունը Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին խնդրել է նաև նկատի ունենալ, որ նման ոչ իրավաչափ հիմքով «ՍԱՄԱԼԻ» ՍՊԸ-ի հայտը մերժելու արդյունքում Երևանի քաղաքապետարանը կկնքի ավելի բարձր գնային առաջարկ ներկայացրած հաջորդ մասնակցի հետ, ինչը հանդիսանում է համայնքային բյուջեի միջոցների անհիմն վատնում:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին կետի «ա» ենթակետի համաձայն՝ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը իրավունք ունի պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունների կամ անգործության վերաբերյալ ընդունելու հետևյալ որոշումները.

ա. արգելելու կատարել որոշակի գործողություններ և ընդունել որոշումներ.

բ. պարտավորեցնելու ընդունել համապատասխան որոշումներ, ներառյալ՝ չկայացած հայտարարելու գնման ընթացակարգը, բացառությամբ պայմանագիրը անվավեր ճանաչելու մասին որոշման:

Ելնելով վերոգրյալից՝ Ընկերությունը ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին խնդրել է պարտավորեցնել Երևանի քաղաքապետարանի կարիքների համար քաղցրավենիքի փաթեթների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԵՔ-ԲՄԱՊՁԲ-19/11» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովին՝ դադարեցնել «ՍԱՄԱԼԻ» ՍՊԸ-ի հայտը մերժելու մասին որոշումը:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 25.09.2019թ. ժամը 10:15-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը և պնդել բողոքով ներկայացված դիրքորոշումը:

2. <u>Երևանի քաղաքապետարանի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը, հիմնավորումները և դիրքորոշումը.</u>

Երևանի քաղաքապետարանը, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 25.09.2019թ. ժամը 10:15-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով հայտնել է, որ «ՍԱՄԱԼԻ» ՍՊԸ-ի հայտը մերժվել է, քանի որ Ընկերության կողմից ներկայացված փաստաթղթերում, այդ թվում գնային առաջարկում, նշված է «ՍԱՄԱԼԻ» ՍՊԸ-ի տնօրեն Մ.Հարությունյան, սակայն փաստաթղթերը էլեկտրոնային ստորագրությամբ հաստատված է Աշոտ Ազիզյանի կողմից: Մասնակցի կողմից ներկայացված փաթեթում բացակայում է Աշոտ Ազիզյանին Ընկերության տնօրենի կողմից փաստաթղթերը էլեկտրոնային ստորագությամբ հաստատելու իրավունքը սահմանող փաստաթուղթը (լիազորագիր):

<u>4. ԳԲՔԱ-ՆԳ-2019/69 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը</u>

ԳԲՔԱ-ՆԳ-2019/69 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1.«Երևանի քաղաքապետարանի կարիքների համար քաղցրավենիքի փաթեթների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ԵՔ-ԲՄԱՊՁԲ-19/11» ծածկագրով բաց մրցույթի, որին մասնակցության հայտ է ներկայացրել նաև «ՍԱՄԱԼԻ» ՍՊԸ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 27.08.2019թ. նիստի թիվ 2 արձանագրության 4.1 կետով արձանագրել է, որ «ՍԱՄԱԼԻ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերում, այդ թվում նաև գնային առաջարկում, նշված է «ՍԱՄԱԼԻ» ՍՊԸ-ի տնօրեն Մ. Հարությունյան, սակայն փաստաթղթերը էլեկտրոնային ստորագրությամբ հաստատված է Աշոտ Ազիզյանի կողմից: Մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթում բացակայում է Աշոտ Ազիզյանի՝ Ընկերության տնօրենի

կողմից փաստաթղթերը էլեկտրոնային ստորագրությամբ հաստատելու իրավունքը սահմանող փաստաթուղթը /լիազորագիրը/:

3.Նույն արձանագրության 4.1 կետով կայացված որոշմամբ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը մերժել է «ՍԱՄԱԼԻ» ՍՊԸ-ի հայտը:

4. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով «ՍԱՄԱԼԻ» ՍՊԸ-ի 18.09.2019թ. բողոքը՝ կից փաստաթղթերով, գործով առկա նյութերը, Ընթացակարգի հրավերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

Օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մասնակիցը հայտը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով: Հայտը ներառում է մասնակցի հաստատած՝

1) հրավերի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությունը.

2) գնային առաջարկը.

3) ոչ գնային առաջարկը (տեխնիկական առաջարկ կամ տեխնիկական բնութագիր), եթե հրավերով նախատեսված է.

<u>4) հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ):</u>

Նույն հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ եթե հայտը ներկայացնում է գործակալը, ապա ***<u>հայտով ներկայացվում է</u>*** վերջինիս այդ լիազորությունը վերապահված լինելու մասին փաստաթուղթ:

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ ***հայտերի բացման նիստում՝ հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում են գնային առաջարկը և (կամ) հայտի ապահովումը կամ եթե դրանք ներկայացված են հրավերի պահանջներին անհամապատասխան***: Գնումն էլեկտրոնային համակարգով իրականացվելու դեպքում հիմք է ընդունվում համակարգում կցված՝ մասնակցի կողմից հաստատված գնային առաջարկը:

Երևանի քաղաքապետարանի կարիքների համար քաղցրավենիքի փաթեթների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ԵՔ-ԲՄԱՊՁԲ-19/11» ծածկագրով բաց մրցույթի, որին մասնակցության հայտ է ներկայացրել նաև «ՍԱՄԱԼԻ» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 27.08.2019թ. նիստի թիվ 2 արձանագրության 4.1 կետով արձանագրել է, որ «ՍԱՄԱԼԻ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերում, այդ թվում նաև գնային առաջարկում, նշված է «ՍԱՄԱԼԻ» ՍՊԸ-ի տնօրեն Մ. Հարությունյան, սակայն փաստաթղթերը էլեկտրոնային ստորագրությամբ հաստատված է Աշոտ Ազիզյանի կողմից: Մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթում բացակայում է Աշոտ Ազիզյանի՝ Ընկերության տնօրենի կողմից փաստաթղթերը էլեկտրոնային ստորագրությամբ հաստատելու իրավունքը սահմանող փաստաթուղթը /լիազորագիրը/:

Նույն արձանագրության 4.1 կետով կայացված որոշմամբ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը մերժել է «ՍԱՄԱԼԻ» ՍՊԸ-ի հայտը:

Օրենքի 30-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ եթե հայտը ներկայացնում է գործակալը, ապա ***հայտով ներկայացվում է*** վերջինիս այդ լիազորությունը վերապահված լինելու մասին փաստաթուղթ:

«ԵՔ-ԲՄԱՊՁԲ-19/11» ծածկագրով բաց մրցույթի հրավերի ՄԱՍ II-ի 3-րդ կետի 3.2 ենթակետով սահմանվել է, որ հրավերով նախատեսված՝ մասնակցի կազմված փաստաթղթերը ստորագրում է դրանք ներկայացնող անձը կամ վերջինիս լիազորված անձը (այսուհետ՝ գործակալ): ***եթե հայտը ներկայացնում է գործակալը, ապա հայտով ներկայացվում է վերջինիս այդ լիազորությունը վերապահված լինելու մասին փաստաթուղթ:***

Գտնում եմ, որ վերոհիշյալ նորմերի համաձայն՝ հայտը ստորագրելու լիազորությունը հաստատող փաստաթուղթը՝ լիազորագիրը, հանդիսանում է հայտում ներառվող փաստաթուղթ, որը ներկայացվում է հայտը ստորագրելու պատշաճ լիազորությունը հավաստելու համար:

Այսպիսով՝ գտնում եմ, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը, մերժելով Ընկերության հայտը, այն հիմնավորմամբ, որ «ՍԱՄԱԼԻ» ՍՊԸ-ի կողմից հայտով ներկայացված փաստաթղթերի վրա նշված է «ՍԱՄԱԼԻ» ՍՊԸ-ի տնօրեն Մ. Հարությունյան, իսկ էլեկտրոնային ստորագրությամբ փաստաթղթերը հաստատվել են Աշոտ Ազիզյանի կողմից, գործել է ոչ իրավաչափ հետևյալ հիմնավորմամբ.

Կարգի 41-րդ կետը սահմանում է, որ եթե հայտերի բացման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում ***մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ***՝ հրավերի պահանջների նկատմամբ, ***բացառությամբ այն դեպքերի, երբ հայտում բացակայում է գնային առաջարկը կամ հայտի ապահովումը, կամ գնային առաջարկը, կամ հայտի ապահովումը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան,*** ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Այսպիսով Կարգի 41-րդ կետը ուղղակիորեն սահմանում է արձանագրված անհամապատասխանությունը շտկելու անթույլատրելիություն հայտում ներառվող միայն երկու փաստաթղթի համար՝ գնային առաջարկ և հայտի ապահովում: Կարգի 41-րդ կետի իմաստից բխում է, որ մնացած բոլոր դեպքերում հայտում ներառվող փաստաթղթերում արձանագրված անհամապատասխանություններն ենթակա են շտկման:

Այս տեսանկյունից, հաշվի առնելով այն հանգամանքը, որ լիազորագիրը վերոհիշյալ նորմերի համաձայն, հանդիսանում է հայտով ներկայացվող փաստաթուղթ և չի հանդիսանում գնային առաջարկ կամ հայտի ապահովում, ուստի դրանում անհամապատասխանություն արձանագրվելու դեպքում, գործում է Կարգի 41-րդ կետով նախատեսված շտկելու հնարավորությունը, ուստի գտնում եմ, որ բողոքը հիմնավոր է և ենթակա է բավարարման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

«ՍԱՄԱԼԻ» ՍՊԸ-ի կողմից 18.09.2018թ. ներկայացված բողոքը բավարարել՝ պարտավորեցնել Երևանի քաղաքապետարանի կարիքների համար քաղցրավենիքի փաթեթների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԵՔ-ԲՄԱՊՁԲ-19/11» ծածկագրով բաց մրցույթ գնահատող հանձնաժողովին՝ դադարեցնել «ՍԱՄԱԼԻ» ՍՊԸ-ի հայտը մերժելու մասին որոշումը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրվանից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**